Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-743[7]-14.12.2023,05.02.2024-ՄԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. **««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին»** 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-435-Ն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

3.1. Հաշտարարությունը կարող է իրականացվել առցանց եղանակով՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որեւէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որեւէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.

2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.

3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~***Հոդված 1.***«Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13 ի ՀՕ 351 Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբխմբագրությամբ.~~

~~«1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.»:~~

Հոդված 1. **««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»** 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-435-Ն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

3.1. Հաշտարարությունը կարող է իրականացվել առցանց եղանակով՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որեւէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման եւ ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված

անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որեւէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.

2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.

3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:»:

~~***Հոդված 21.*** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝խմբագրությամբ.~~

~~«5) հաշտարարության կողմի՝ ընտանիքում եւ կենցաղային բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող նշանների առկայության դեպքում ընտանիքում և կենցաղային ենթադրաբար բռնության ենթարկված կողմին տեղեկացնել «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանության եղանակների մասին:»:~~

Հոդված ~~3~~2. Եզրափակիչ մաս

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հարջորդող տասներորդ օրը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: